ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

Լրացավ ականավոր ազգագրագետ, բանագետ, հնագետ, հայ գիտական ազգաշրության հիմնադիր, բազմավաստակ գիտնական Երվանդ Լալայանի ծննդյան 100-ամյակը։

Երվանդ Ալեքսանդրի Լալայանը ծնվել է 1864 թ. մարտի 13-ին, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական), բանվորի ընտանիքում։ Նա սովորել է Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում և այն ավարտել 1885 թ.։ Նյութական միջոցներ չունենալով կրթությունը շարունակելու, նա հինգ տարի ուսուցչությամբ է զբաղվել Ախալցիխայում, Ալեքսանդրապոլում և Ախալքալաքում, դասավանդելով այդ քաղաքների թեմական դպրոցներում։ 1890 թ. Ե. Լալայանը կնոջ՝ Հ. Լալայանի հետ միասին մեկնում է Ժնև, ուր սովորում է համալսարանի հասարակագիտական բաժնում, իսկ կինը՝ բնագիտական։ Նրանց ուսումնառությունը ընթանում է նյութական սուղ պայմաններում։

1894 թ. Լալայան ամուսինները ավարտում են Ժնևի համալսարանի դասընթացը։ Ե. Լալայանին շնորհվում է սոցիալական գիտությունների թեկնածուի աստիճան։ Այնուհետև Ե. Լալայանը 6 ամիս աշխատում է Վիեննայի Մխիթարյանների մոտ, ապա՝ Փարիզի մարդաբանական դպրոցում։ Ե. Լալայանը էքստեռն կարգով ավարտում է Լոզանի համալսարանին կից մանկավարժության դասընթացը և ստանում մանկավարժի որակավորում։ Վերադառնալով Անդրկովկաս, նա 1895—1897 թթ. աշխատում է Շուշիի թեմական դպրոցում, որպես դասատու[1]։

Երվանդ Լալայանը փայփայում էր ազգագրական բնույթի հանդես ստեղծելու գաղափարը և մեծ ջանքեր էր գործադրում այդ ուղղությամբ։ 1896 թ. նրան հաջողվում է հենց այստեղ, Շուշիում լույս ընծայել «Ազգագրական հանդես»-ի առաջին գիրքը, ուր «Հրատարակչից» խորագիրը կրող համառոտ առաջաբանում, շարադրում է ամսագրի նպատակները։

---

1 Լ ե ո, Պատմություն հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838—1913 թթ., Թիֆլիս, 1915, էջ 538։

Նա գրում է. «Բոպեական ազգեցության տակ չենք վճռել մի այդպիսի հանդեսի հրատարակության ձեռնամուխ լինել, ոչ էլ պատահմամբ ենք ընտրել այս մեզ ճանաչողները գիտեն թե ո՞րքա՞ն ժամանակից ի վեր փայփայել ենք այս միտքը և ո՞րքան արգելքների ենք հաղթել փոքր ի շատե նախապատրաստվելու այս գործի համար։ Այսօր մենք հանդես ենք գալիս ոչ թե միայն մեր ուժերի վրա վստահացած, այլ ազգի ինքնաճանաչության զգացման։ Թերթերի մեջ սփռված և առանձին լույս տեսնող ազգագրական հոդվածներն արդեն ապացուցանում են, որ հայոց ազգն էլ վերջապես զարթել ՝ խոր քնից և ցանկանում է կատարել գիտության ամենիմաստ խոսքը. «Ծանի՞ր զքեզ». նա կամենում է ճանաչել իրեն և յուր ազգային հատկությունների վրա հիմնել ազգային զարգացումը»[2]։ Այնուհետև Ե. Լալայանը նշում է, որ մենք մասնագետ ազգագրագետներ չունենք, ուստի կոչ է անում ուսուցիչներին և ուսուցչուհիներին ձեռնամուխ լինելու ազգագրական նյութերի հավաքմանը։ Ե. Լալայանը նշում է, որ այժմ մեր խնդիրը միայն նյութեր հավաքելն է, որովհետև առանց դրան գիտական աշխատություն գրել անհնարին է, և վերջացնում է հետևյալ խոսքերով. «Մենք կկրենք քարերը և երանի նրան, ով կգա այդ քարերով ազգային ինքնուրույնության շենքը կառուցանելու և համամարդկային էվոլյուսիոնի օրենքները գծելու»[3]։

«Ազգագրական հանդեսը» հրատարակվում է 20 տարի, 26 գրքով։ Հանդեսի շուրջն էին համախմբված ժամանակի լավագույն գիտական ուժերը՝ Մ. Արեղյանը, Թ. Թորամանյանը, Հ. Աճառյանը, Լեոն, Լ. Մելիքսեթ-Բեկը, Ս. Լիսիցյանը, Ա. Զելինսկին, Ե. Շահազիզը, Կարա-Մուրզան և ուրիշներ։ Ազգագրական հանդեսի հրատարակումը ջերմորեն ողջունեցին մի շարք ամսագրեր։

Անդրկովկասում ազգագրական աշխատանքներն ավելի ծավալելու նպատակով Ե. Լալայանը 1900 թ. նոյեմբերի 21-ին Թիֆլիսում հիմնադրում է Ազգագրական հրատարակչական ընկերություն, որի անդամների թիվը 1905 թ. հասնում էր 80-ի։ 1905 թ. հեղափոխությունից հետո Ե. Լալայանը մտադիր էր ավելի ընդարձակել ազգագրական հրատարակչական ընկերության գործունեությունը, այն վերածելով Հայոց ազգագրական ընկերության։ Այդ նպատակով նա կազմում է ընկերության ծրագիր, որը հաստատվում է 1906 թ. մայիսի 16-ին։ Դրանով հիմք է դրվում Հայոց ազգագրական ընկերության։ «Մշակի» 1906 թ. № 116-ում տպագրված է ընկերության նախագահ Ա. Մելիք-Ազարյանի և անդամ-քարտուղար Ե. Լալայանի շրջաբերականն ընկերության հիմնադրման մասին՝, և «Մշակի» ողջույնը այդ առթիվ[5]։

Ընկերության նպատակը, ինչպես գրված էր կանոնագրության առաջին կետում, հետևյալն էր. «...Ուսումնասիրել Կովկասը, նրա կից երկրները և հայկական գաղութները, մասնավորապես ազգագրական և ընդհանրապես մարդաբանական գիտությունների տեսակետից»[6]։ Այս իրագործելու համար ընկերությունը պետք է հրատարակեր պարբերականներ, գրքեր, քարտեզներ, կազմակերպեր գիտական արշավախմբեր, կատարեր հնագիտական պեղումներ, նպաստեր Էջմիածնի և Կովկասյան թանգարանների ֆոնդերի հարստացմանը,

2 «Ազգագրական հանդես», գիրք Ա, Հուշի, 1896, էջ 5։
3 Նույն տեղում, էջ 6։
4 «Մշակ», Թիֆլիս, 1906, № 116։
5 Նույն տեղում, № 127։
6 «Ազգագրական հանդես», գիրք 14-րդ, Թիֆլիս, 1906, էջ 186։

բաց աներ գրադարան, կազմակերպեր հրապարակային դասախոսություններ, ազգագրական-երաժշտական երեկույթներ, մրցանակներ սահմաներ արևելագիտական լավագույն աշխատանքների համար։ Վերոհիշյալ աշխատանքների մեծ մասը պետք է կատարեր խմբագրական մասնաժողովը, որը, ընդհուպ մինչև ընկերության գործունեության դադարումը, ղեկավարում էր Ե. Լալայանը։

Նորաստեղծ Ազգագրական ընկերությունը Ե. Լալայանի գլխավորությամբ իր գոյության ավելի քան 10 տարիների ընթացքում հսկայական աշխատանք ծավալեց։ Ընկերությունը կարևոր գործ կատարեց ազգագրական-հնագիտական թանգարան հիմնելու ուղղությամբ։ 1907 թ. մարտի 30-ին հրավիրված Հայոց ազգագրական ընկերության ժողովը որոշում ընդունեց նախապատրաստական աշխատանքներ տանել թանգարան հիմնադրելու համար և այդ կապակցությամբ անհրաժեշտ համարվեց հրատարակել նյութեր հավաքելու ծրագիր, պատրաստել մատյաններ՝ նյութերը գրանցելու համար, ստեղծել պահեստ Թիֆլիսում և այլն։ Շուտով ծրագիրը տպագրվում է «Ազգագրական հանդեսի» 16-րդ գրքում, ապա առանձին բրոշյուրով։

Ե. Լալայանի մեծ ջանքերի շնորհիվ կազմակերպվում է թանգարան և այնտեղ կարևոր տեղ են գրավում նրա հավաքած և պեղումների ժամանակ հայտնաբերած նյութերը։ Թանգարանը գնալով հարստանում է, հասարակայնությունը ակտիվ մասնակցում է նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ նյութերի հավաքման գործին։ Թանգարանը սրդեն այնքան ճանաչում էր ստացել, որ ռուսական բանասերների և բժիշկների 1913 թ. կայացած 13-րդ համագումարի աշխարհագրական ենթասեկցիայի բյուրոն դիմել էր Հայոց ազգագրական ընկերության՝ խնդրելով համագումարի սրերին Թիֆլիսում ցուցահանդես կազմակերպել[7]։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ Ի. Բորոդինը կայսերական աշխարհագրական ընկերության անունից 1913 թ. ապրիլի 24-ին դիմում է Ե. Լալայանին՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել բնության պահպանության համար[8]։ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ե. Լալայանի ջանքերով թանգարանը փոխադրվում է Երևան, նրա բազայի վրա կազմակերպվում է Հայաստանի պետական պատմական թանգարանը, որի առաջին վարիչը դառնում է Ե. Լալայանը։ •

Հիմնադրելով Հայոց ազգագրական ընկերությունը՝ Ե. Լալայանը նպատակ ուներ դարձնել այն ոչ միայն ազգագրական-բանասիրական բնույթի նյութերի հավաքման և հրատարակման մի ընդարձակ կազմակերպություն, այլև գիտական ուսումնասիրությունների կենտրոն։ Ահա թե ինչու նա մեծ աշխատանք է կատարում Թիֆլիսում ազգագրական-մարդաբանական և կովկասագիտական գրադարան բացելու ուղղությամբ։ «Մշակ»-ի 1908 թ. N 55-ում տպագրված է Հայոց ազգագրական ընկերության նախագահ Ա. Մելիք-Ազարյանի, անդամ-քարտուղար Ե. Լալայանի և մյուս անդամների նամակը խմբագրությանը, որտեղ ասվում է, որ ընկերության խորհուրդը 1908 թ. հունվարի 4-ի նիստում որոշեց Թիֆլիսում բացել այդպիսի գրադարան, օգտվելով այն

7 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, Ե. Լալայանի ֆոնդ, 714/24։

8 Նույն տեղում, 714/21։

հանգամանքից, որ Ե. Լալայանը այդ գիտությունների վերաբերյալ իր հարուստ գրադարանը (5000 ռ. արժողությամբ) դրել է ընկերության տրամադրության տակ։ Նամակի հեղինակները միաժամանակ խնդրում էին հասարակությանը օգնություն ցույց տալ այդ գործին։ Գրքերի քանակը գնալով աճում է, հատկապես նվիրատվությունների, գրքափոխանակությունների հաշվին, և շուտով նրանց թիվը հասնում է 10000-ի։ Գրադարանի ղեկավար է դառնում Ե. Լալայանի կինը՝ Հայկանուշ Լալայանը, որն այդ աշխատանքը կատարում էր առանց վարձատրության։ Հայոց ազգագրական ընկերությունը թույլտվություն էր ստացել հայերեն գրքերի 1500-ամյա և հայկական տպագրության 400-ամյա հոբելյանի առթիվ Թիֆլիսում կազմակերպել հայկական հրատարակությունների ցուցահանդես և մի շարք դասախոսություններ։ Այդ ցուցահանդեսի կազմակերպման գործում գրադարանը մեծ դեր խաղաց։ Հրատարակվում է նաև «Մարդաբանական գրադարան» խորագրով մատենաշար, որից լույս տեսավ ընդամենը 5 գիրք։

Հայոց ազգագրական ընկերությունը Ե. Լալայանի գլխավորությամբ կարևոր տեղ էր հատկացնում ազգագրական և մարդաբանական գիտությունների պրոպագանդմանը. այդ կապակցությամբ պարբերաբար կազմակերպվում էին դասախոսություններ և զեկուցումներ, որոնցով հանդես էին գալիս ժամանակի նշանավոր գիտնականները։ Նշենք դրանցից մի քանիսին։ Այսպես, օրինակ, Մ. Հովհաննիսյանը դասախոսություն է կարդացել «Կրոնի գաղափարի ծագման և էվոլյուցիայի մասին»[9] թեմայով և Գ. Լևոնյանը՝ հայ աշուղների և մասնավորապես Ջիվանու կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ, որը զուգակցվում էր աշուղների ելույթներով[10]. Ե. Լալայանը զեկուցում է կարդացել ասորիների մասին[11]. Գ. Խալաթյանի մահվան տարեդարձի առթիվ տեղի ունեցավ Հայոց ազգագրական ընկերության հրապարակային նիստը, ուր Ե. Լալայանը և Ատրպետը բնութագրեցին հանգուցյալի գործունեությունը. Հ. Համբարձումյանը հանդես է եկել սովորութային իրավունքի էության, նրա օբյեկտիվ արտահայտության և ժամանակակից հասարակական կյանքում կատարած ազդեցության հարցին նվիրված դասախոսությունով[12]։ Գ. Իփեկյանը զեկուցել է «Հայկական ամուսնական սովորությունները»[13] թեմայով և այլն։ Զեկուցումներից հետո տեղի էին ունենում վիճաբանություններ, որտեղ հանդես էին գալիս Ե. Լալայանը, Լեոն, Մ. Արեղյանը, Ս. Կանայանը, Մ. Խոստիկյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը և ուրիշներ։

Հայոց ազգագրական ընկերությունը հաճախակի կազմակերպում էր նաև գիտական ու գրական երեկոներ, համերգներ, պարահանդեսներ, օպերաների դիտումներ, որոնցից ստացված եկամուտները մուծվում էին ընկերության գանձարանը[14]։ Նման երեկույթներ կազմակերպվում էին ոչ միայն Թիֆլիսում, այլև մյուս քաղաքներում[15]։

---

9 «Մշակ», 1912, № 279։
10 Նույն տեղում։
11 Նույն տեղում։
12 Նույն տեղում, 1913, № 43։
13 Նույն տեղում, № 31։
14 Նույն տեղում, № 92։
15 «Մշակ», 1917, № 10։

Ե. Լալայանի առաջին խոշոր գործը «Ջավախքի բուրմունքն» էր[16], որը մի ժողովածու է Ջավախքի բանահյուսությունից։ Այնտեղ ընդգրկված են պարերգեր, սիրո, հարսանյաց, պանդխտության, աշխատանքի, երգիծական երգեր, կրոնական, պատմական, տեղագրական բնույթի ավանդություններ և այլն։ Դա իսկապես մի գեղեցիկ ծաղկեփունջ է, որը կազմել է Ե. Լալայանը մեծ հմտությամբ։

Այնուհետև Ե. Լալայանը հրատարակում է մի քանի փոքր, բայց հետաքրքիր հոդվածներ։ Դրանցից են. «Ս. Սարգիսը»[17], ուր համառոտակի նկարագրում է Ս. Սարգսի պաշտամունքը և մեջբերում նմուշներ Ախալքալաքի բարբառով։ «Տաջկախոս հոռոմեական հայերը»[18] հոդվածը, որը վերաբերում է Ախալքալաքի գավառին՝ Բավրա, Խուլդումա, Կառոտիկում և մասամբ Տուրս գյուղերի բնակիչներին, որոնք «տաջկախոս հոռոմեական հայեր» են և այդտեղ են գաղթել 1829 թ. Արդահանի գավառից։ Հայկական սովորություններից շատերն են պահպանվել նրանց մոտ, իսկ լեզվում կան բազմաթիվ հայերեն բառեր, նրանք գիտեն հայկական ժողովրդական աղոթքներ և աշխատում են սովորել մայրենի լեզուն։

Ե. Լալայանը Փարիզի ժողովրդական ավանդությունների ընկերության գործուն անդամներից էր և 1895 թ. այդ ընկերության օրգանում տպագրվում է նրա «Հայկական ավանդությունները և սնոտիապաշտություն» հոդվածաշարը[19]. Ե. Լալայանը Փարիզի մարդաբանական ընկերության ժողովում գասախոսություն է կարդացել «Հայոց նախնի պատմական երգերի և ավանդությունների մասին»։ Զեկուցումը տպագրվում է «Bulletin de la societé d'Anthropologie»-ում 1896 թ., իսկ Ե. Լալայանը ընտրվում է վերոհիշյալ ընկերության թղթակից-անդամ։

«Ազգագրական հանդեսի» Ա գրքում զետեղված է Ե. Լալայանի «Համառոտ տեսություն հայ ազգագրության» հոդվածը։ Պետք է նկատել, որ XIX դարի երկրորդ կեսին ազգագրությունը և բանահյուսությունը իրարից դեռևս անջատված չէին, այդ իսկ պատճառով հեղինակը խոսում է և՛ բանահյուսության, և ազգագրության մասին, ավելի մեծ տեղ տալով բանահյուսությանը։ Հոդվածն էլ անավարտ է և շատ հեռու հայ ազգագրության համառոտ տեսություն լինելուց։

«Ազգագրական հանդեսի» Ա և Բ գրքերում տպագրված է Ե. Լալայանի «Ջավախք» մեծածավալ և արժեքավոր աշխատությունը, որը գրված է հեղինակի հավաքած նյութերի հիման վրա և որպես այդպիսին ամբողջովին նորույթ է։ Աշխատությունը կազմված է հետևյալ մասերից՝ պատմական համառոտ տեսություն, ուր տրվում է Ջավախքի պատմական անցյալը հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջը։ Ջավախքի տեղագրությունը՝ լեռներ, լճեր, գետեր, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, նշանավոր գյուղերը, հնությունները՝ եկեղեցիներ, ամրոցներ։ Մյուս գլուխները նվիրված են Ջավախքի բնակչությանը. հանգամանորեն տրվում են վիճակագրական տվյալներ Ջավախքում բնակվող հայերի, հայ բոշաների, ռուսների, վրացիների, հույների,

16 «Ջավախքի բուրմունքը», հավաքեց Ե. Լալայանց, Թիֆլիս, 1922։

17 «Հանդես ամսօրյա», 1894, № 11։

18 Նույն տեղում, № 10։

19 Տե՛ս „Revue des traditions populaires", 1895.

թուրքերի, քրդերի, ինչպես նաև ազգաբնակչության տեղաշարժի, տնտեսական դրության, ժողովրդի լուսավորության մասին, ապա՝ բնակարանների, ամուսնության և հարսանեկան սովորությունների, ընտանեկան կյանքի, բժշկության, հոգու և հանդերձյալ կյանքի ու հավատքի վերաբերյալ։

Ե. Լալայանի աշխատությունը լավ ընդունելություն գտավ։ Անգամ նրա քննադատներից Գ. Վանցյանը ստիպված էր ընդունել, որ «Հանդեսի ծուծն ու էությունն է «Ջավախք» ինքնուրույն ժողովրդագրական հավաքածուն, որ յուր առատ բազմակողմանի նյութով մի ահագին դանձ է հայ ազգագրության համար»[20]։

Ազգագրական հանդեսի Բ, Գ գրքերում է զետեղված Ե. Լալայանի խմբագրությամբ լույս տեսած կոլեկտիվ «Վարանդա» աշխատությունը։ Այդ արժեքավոր հետազոտության կազմմանը մասնակցել են Ե. Լալայանը, Լ. Աթարբեկյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Հ. Վ.-Ն. և Ա. Ռ.-Ն, աշխատության մեծ մասը գրված է Ե. Լալայանի կողմից։ «Ազգագրական հանդեսի» Դ գրքում նույն ընդարձակ ծրագրով շարադրված են «Սիսիան»[21] և «Զանգեզուր» աշխատությունները։

Լույս է տեսնում նաև Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» մեծածավալ աշխատությունը[22], ուր նա հանգամանորեն տալիս է Նոր Բայազետի տեղագրությունը, պատմությունը, հարսանեկան սովորությունները, հավատքը։ Աշխատությունը գրված է Ե. Լալայանի երկար տարիների կատարած պեղումների և հավաքած ազգագրական-բանահյուսական նյութերի հիման վրա։ Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ» աշխատությունն արժանացել է Ղուկասյան մրցանակի, իսկ «Գանձակի գավառը»՝ Սահակ-Մեսրոպյան մրցանակի։

Իր հաջորդ աշխատանքը՝ «Վասպուրականը»[23], Ե. Լալայանը նախատեսել էր հրատարակել մի քանի հատորով, սակայն դա նրան չի հաջողվում։ Հրատարակված աշխատությունը կազմված է հետևյալ մասերից՝ Վասպուրականի ազգագրությունը, բանահյուսությունը, Վասպուրականի ասորիները, տնայնագործությունը, նշանավոր վանքերը, ընդորում նա ոչ միայն վանքերի նկարագրությանն է անդրադառնում, այլև խոսում է վանքերի շուրջը կատարվող ծեսերի մասին, տալիս է վանքերի և նրա շրջակա տապանաքարերի վրայի արձանագրությունների վերլուծությունը։ Դա մի կապիտալ և արժեքավոր աշխատություն է Վասպուրականի վերաբերյալ և արդյունք է հեղինակի մի քանի տարիների համառ աշխատանքի։

Ե. Լալայանի տեսական բնույթի աշխատություններից է «Ոիսական կուրգերը հայոց մեջ» հոդվածաշարը[24] (շարադրված Հ. Սպենսերի մեթոդով), որը թեև տառապում է մի շարք սխալ դրույթներով, բայց արժեքավոր է փաստական հարուստ նյութի օգտագործմամբ։ Ե. Լալայանի կյանքի վերջին շրջանում գրած աշխատություններից մեկը «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական

20 «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 5, էջ 635։

21 «Ազգագրական հանդես», գիրք Դ, Թիֆլիս, 1898։

22 Նույն տեղում, գիրք 13, 1906, գիրք 15, 1907, գիրք 16, 1907, գիրք 17, 1908, գիրք 18, 1908, գիրք 19, 1910, գիրք 20, 1910, գիրք 22, 1912, գիրք 23, 1912, գիրք 24, 1913։

23 Նույն տեղում, գիրք 20, 1910, գիրք 21, 1912, գիրք 22, 1912, գիրք 23, 1912, գիրք 24 1913, գիրք 25, 1914, գիրք 26, 1916։

24 Նույն տեղում, գիրք 21, 1912, գիրք 23, 1912, գիրք 25, 1914, գիրք 26, 1916։

տեսակետից»[25] հոդվածն է, որը հանդիսանում է նրա երկարամյա ուսումնասիրության արդյունքը և հիմնականում դրված է իր հավաքած նյութերի հիման վրա։ Հեղինակը հասարակական նկարագրում է Նիժի և Վարդաշենի տեղագրությունը, բուսական և կենդանական աշխարհը, ուտիների ծագման մասին տեսակետները, ապա անցնում է լեզվին։ Սոցիալական կարգը բնորոշելիս հետաքրքիր տվյալներ է բերում անցյալում ուտիացիների մոտ գոյություն ունեցած մայրիշխանության մասին։ Բայց աշխատությունը ամբողջական չէ, որովհետև չեն տրված ուտիացիների սոցիալական հարաբերությունները, հավատքը, մշակույթը։

Ե. Լալայանի վերջին աշխատությունը «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ» զեկույցն է, որ նա կարդացել է ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակական բաժնում 1930 թ. մայիսի 10-ին. այն լույս տեսավ հեղինակի մահից հետո՝ 1931 թ., նույն ինստիտուտի № 5 տեղեկագրում։ Հոդվածում Ե. Լալայանը, օգտագործելով երկար տարիների ընթացքում իր հավաքած նյութերը, ինչպես նաև համեմատական ազգագրության հարուստ տվյալները, հանգամանորեն բացահայտում է տղաբերքի սովորությունների էվոլյուցիան՝ սկսած հնագույն շրջանից մինչև XX դարի սկիզբը։ Տալիս է տղաբերքի սովորությունների կոմպլեքսը, իր բոլոր տարրերով հանդերձ՝ ամլություն, հղի կնոջն օգնող և հալածող ոգիներ, ծնունդ, քառասունք և այլն։ Տղաբերքի սովորությունները քննելիս Ե. Լալայանը հմտորեն ցույց է տալիս նրա աղերսը ջրի, կրակի, կենդանիների, ծառերի, քարերի պաշտամունքի և նմանաբանական կախարդության հետ։

Ե. Լալայանի՝ բանահյուսության բնագավառում կատարած աշխատանքների վրա մենք առանձին կանգ չառանք, քանի որ դրանք սերտորեն շաղկապված են նրա ազգագրական գործունեության հետ։ Լալայանը ազգագրագետ և բանագետ էր միաժամանակ։

Ե. Լալայանը «Ազգագրական հանդեսում» և առանձին գրքերով հրատարակել է իր հավաքած չափազանց արժեքավոր բանահյուսական նյութերը։ «Ազգագրական հանդեսում» լույս է ընծայել՝ «Կենդանական վեպը»-[6], «Արագելեցիկ ավանդավեպը»[27], «Ալեքսանդր Մակեդոնացին»[28], «Դավիթ անհաղթը»[29], «Սասնա ծռերը»[30], «Ռուստամ Զալ»[31], «Նոր Բայազետի գավառի բանահյուսությունից»[32], «Ապարանի բանահյուսությունից»[33], «Ջավախքի բանահյուսությունից»[34]։ Առանձին գրքերով հրատարակվել են՝ «Հորոս»-ը[35], «Մոլլա Նասր-էդ-դինը»[36], «Պառավաշունչ»-ը[37], «Մարգարիտներ հայ բանահյուսության» երեք հատորը։

25 «ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 1, Երևան, 1926։
26 «Ազգագրական հանդես», գիրք 2, 1897։
27 Նույն տեղում, գիրք 9, 1902։
28 «Ազգագրական հանդես», գիրք 10, 1903։
29 Նույն տեղում։
30 Նույն տեղում, գիրք 13, 1906։
31 Նույն տեղում, գիրք 14, 1906։
32 Նույն տեղում, գիրք 19, 1910։
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում։
35 Թիֆլիս, 1903։
36 Թիֆլիս, 1904։
37 Ալեքսանդրապոլ, 1911։

Հայոց ազգագրական ընկերությունը 1915 թ. սեպտեմբերին կազմեց մի արշավախումբ Ե. Լալայանի գլխավորությամբ, որը պետք է բանահյուսական նյութեր հավաքեր գաղթականներից։ Արշավախումբը ավելի քան 4 ամիս շրջելով՝ գրի առավ 1000 հեքիաթ և բազմաթիվ երգեր։ Ե. Լալայանը իր երկարատև գործունեության ընթացքում հավաքել է հարյուրավոր հեքիաթներ, որոնք իրենց արժանի տեղն են գտել Հայկական ՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակում, որից 4 հատոր արդեն լույս է տեսել։

Ե. Լալայանի բազմաբեղուն գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում հնագիտական աշխատանքները։ Նա հնագիտական պեղումներ է կատարել Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներում։ Այնտեղ (Քյուլ-Թափա, Ուզուն-օրա-աշաղա, Կարմիր վանք գյուղերում, Խրամ ավերակ քաղաքում) պեղված են մի շարք դամբարաններ, ուր գտնված են կավե անոթներ, այլևայլ իրեր, կենդանիների և բույսերի մնացորդներ (այրված ցորեն ու գարի)։ Այս նյութերը նա օգտագործել է իր «Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճավան» աշխատության նախապատմական շրջանը շարադրելիս։ Այս պեղումների մասին նա զեկուցել է Կովկասի հնագիտական ընկերության նիստում, որը կայացել է Թիֆլիսում 1904 թ. նոյեմբերի 14-ին, կոմսուհի Պ. Ուվարովայի նախագահությամբ։ Զեկուցման ժամանակ ցուցադրվել են պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը, որոնք բարձր են գնահատվել մասնակիցների կողմից[38]։

Ավելի հանգամանորեն և երկար պեղումներ է կատարել Ե. Լալայանը 1905, 1906 և 1908 թթ. Նոր Բայազետի գավառում, ուր պեղել է 516 դամբան։ Իր պեղած դամբանները նա դասակարգել է հետևյալ կերպ. ա) միկրաասյան դամբաններ, բ) երկկարասյան, գ) դամբաններ, որոնք արտաքուստ ներկայացնում են հողակույտ թմբեր՝ 0,5—7 մ բարձրությամբ, հաճախ կլոր՝ 3—100 մ տրամագծով և երբեմն՝ ձվաձև։ Դրանց մանրամասն նկարագրությունները կան «Ազգագրական հանդեսի» 14—17-րդ գրքերում։ Հայտնաբերված է հարուստ հնագիտական նյութ՝ դաշույններ, ապարանջաններ, մատանիներ, ուլունքներ, պուլիկներ, մարդկանց և կենդանիների կմախքներ, պաշտամունքի առարկա դարձած եզան գերեզման, հայտնի «իշխանական սայլ» և այլն, որոնք չափազանց կարևոր նշանակություն ունեն նախահայկական մշակույթի շատ հարցեր պարզելու համար։

Ե. Լալայանը 1908 թ. Ղուլալի գյուղի մոտ գիպվածորեն հայտնաբերել է արամեական վիմագիր արձանագրություն, որը անմիջապես ուղարկել է Թիֆլիսի Հայոց ազգագրական թանգարան, իսկ լուսանկարը և էստամպաժը՝ մասնագետներին։ Նույն թվականին Ե. Լալայանը Մրթպի ձորում հայտնաբերել է պաշտամունքի առարկա դարձած եզան գերեզման։

Ե. Լալայանին հաջողվել է գտնել ցցատների (պալաֆիտ) հետքեր Սևանա լճի արևելյան կողմում՝ Գիլլի գետակը լիճը թափվելու տեղում։

Սակայն Լալայանի ամենակարևոր հնագիտական հայտնագործություններից մեկը եղավ Ադիաման գյուղի Դեմեր կոչված վայրում պեղված դամբարանը, որի մեջ բացվեց բարձրարվեստ փորագրությամբ զարդարված սայլ։ Սայլի վրա գետեղված էր մի երկարագլուխ մարդու կմախք, իսկ հանգուցյալի հետ

38 «Մշակ», 1904, № 251։

թաղված իրերը (դաշույն, ապարանջան, մատանի) բրոնզից էին։ Շուրջը անկանոն կերպով բնկած էր 13 մարդու կմախք. ուսումնասիրություններ ցույց է տալիս, որ դրանք կամ ստրուկներ են եղել կամ ռազմագերիներ։ Դիակառքին լծված է եղել 4 եզ։ Լծի մոտ գտնվել է սայլապանի կմախքը։ Սայլը եռանիվ էր, լծի վրա կանգնեցված բրոնզե սնամեջ այծյամի իրանում գտնվել են երեք փոքրիկ գնդակ, որոնք սայլը շարժվելիս զնգզնգացել են։ Սայլը խիստ քայքայված էր, բայց Ե. Լալայանին հաջողվում է քանդակագործ Վարձիգուլյանի հետ միասին վերականգնել նրա պատկերը։ Սայլի մնացորդները այժմ գտնվում են Հայաստանի պետական պատմական թանգարանում։

Պեղումներ կատարելիս Ե. Լալայանը միաժամանակ բացատրական մեծ աշխատանք է տանում հնագիտական հուշարձանները պահպանելու ուղղությամբ։ Նոր Բայազետի 1905—1906 թթ. պեղումների հետևանքով հայտնաբերված նյութերը հանձնվում են Կովկասյան թանգարանին, որովհետև դրանք կատարված էին Մոսկվայի հնագիտական ընկերության տրամադրած միջոցներով և այժմ գտնվում են Վրաստանի թանգարանում։

1908 թ. պեղումները ֆինանսավորվել են Հայոց ազգագրական ընկերության կողմից և ի հայտ բերված նյութերը այժմ պահվում են Հայաստանի պետական թանգարանում։ Վերոհիշյալ նյութերի հիման վրա է գրված Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» աշխատության նախապատմական շրջանի զգալի մասը։ Նոր Բայազետի պեղումների մասին Ե. Լալայանը բազմիցս զեկուցել է Հայոց ազգագրական ընկերության ժողովներում և նիստերում։ Այդ պեղումները բարձր են գնահատվել մամուլի կողմից։ Այսպես, «Լույսի» մեջ տպագրված գրախոսականում ասվում է. «Պեղումներ Նոր Բայազետի գավառում, որ կատարել է ինքը պ. Լալայանը 1908 թ., շատ հետաքրքիր հնագիտական գյուտեր է արել մեր հեղինակը, որոնք անշուշտ ապագա հնագիտական ուսումնասիրությունների համար հարուստ նյութեր են պարունակում»[40]։

Ե. Լալայանը նեոլիթյան հուշարձաններ հայտնաբերելու նպատակով ուշագրավ պեղումներ է կատարել 1913 թ.՝ Շրեշ-բլուրում և 1927 թ.՝ Էլարում։ Էլարում Ե. Լալայանը բացել է գրեթե բոլոր ժամանակների՝ բրոնզի, երկաթի դարի վերաբերող դամբաններ։ Այնտեղ գտնված են Լալայանի կարծիքով նեոլիթին վերաբերող (իրոք էնեոլիթյան դարաշրջանի) խեցեղեն, քարե մուրճեր, վանակատի դանակներ, աղորիքներ, հերուններ և այլն։ Էլարի մշակույթը, ըստ Ե. Լալայանի, նման է Էջմիածնի գավառի Շրեշ-բլուրի մշակույթին։ Այդտեղ Ե. Լալայանը պեղումներ է կատարել 1913 թ. ամռանը և զեկուցել Հայոց ազգագրական ընկերության հրապարակային նիստում։ Շրեշ-բլուրում հայտնաբերված են քարե մուրճեր, քարե կացին, աղորիքներ, կավե ամաններ։ Պատերազմը խանգարեց պեղումների հետագա շարունակմանը, իսկ զեկուցումն էլ մնաց անտիպ։

Մոսկվայի հնագիտական ընկերության Կովկասի բաժանմունքի միջոցներով Ե. Լալայանը 1915 թ. մայիսի 1-ից մինչև հուլիսի 15-ը պեղումներ է կատարել Նուխիի գավառի Նիժ և Վարդաշեն գյուղերի շրջակայքում, ուր պեղել է երկաթի դարին պատկանող մի շարք դամբաններ։ Այդ մասին նա զեկու-

39 Տե՛ս «Մշակ», 1906, № 191։

40 «Լույս», Նոր-Նախիջևան, 1910, № 19, էջ 13։

դել էր վերոհիշյալ ընկերության 1916 թ. ապրիլի 15-ի նիստում, որի որոշմամբ էլ զեկուցումը տպագրվել է[41]։

Հնագիտական բնույթի աշխատությունների մեջ կարևոր տեղ է գրավում Ե. Լալայանի «Պեղումներ Նոր Բայազետի գավառում»[42] հոդվածաշարը, որը լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ։ Վերոհիշյալ հոդվածներում նա մանրամասն նկարագրում է իր կատարած պեղումները, թվագրում հնագիտական նյութը, տալիս իլյուստրացիաներ։

Հնագիտական բնույթ ունի նաև նրա «Վարձիա կամ վարձունիք» հոդվածը[43], տպագրված «Հանդես ամսօրյայում», որը վերաբերում է Ախալքալաքից 25 կմ հեռավորության վրա գտնվող Վարձիա ամրոց-ապարանքին։ Ե. Լալայանը մանրամասն նկարագրում է հոյակապ և իր բնույթի մեջ եզակի այդ հուշարձանը։

Ուշագրավ է Ե. Լալայանի «Հուղարկավորությունը և գերեզմանների զարգացումը Հայաստանում»[44] աշխատությունը, որը նրա կարդացած դասախոսությունն է ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակագիտական բաժնում, 1928 թ. հունվարի 14-ին։ Ե. Լալայանը հանգամանորեն կանգ է առնում հուղարկավորության ձևերի վրա՝ միկարասյան, երկկարասյան, մենհիրներ, կրոմլեխներ, դոլմեններ, դամբաններ, տապան, դիակակիզություն, գերեզմաններ։ Նկարագրում է դրանց հետ կապված սովորությունները՝ ննջեցյալների հետ զարդեր և զենքեր դնելը, կանանց, ձիերին, ծառաներին թաղելը, հոգու հաց տալը և այլն։ Այդ բոլորը նկարագրելիս նա վարպետորեն օգտագործում է համեմատական ազգագրական նյութերը։

Ե. Լալայանի հնագիտական բոլոր աշխատությունները ամփոփված են նրա «Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում»[45] գրքում, որը լույս տեսավ հեղինակի մահից հետո։

Ե. Լալայանը պեղումներով հայտնաբերել է մեծ քանակությամբ գանձեր, որոնք գտնվում են Հայաստանի և Վրաստանի թանգարաններում։ Այդ գանձերի չափումները կատարել է պրոֆ. Բունակը և հոդված է տպագրել «Русский антропологический журнал»-ում, Ե. Լալայանի առաջարանով[46]։ Ե. Լալայանը հնագիտական նյութեր ուսումնասիրելիս փորձել է օգտագործել նաև ժամանակի գիտության առաջավոր մեթոդները։ Նա իր պեղած նյութերը ուղարկում էր Լենինգրադ, քիմիկոս Սկինդերին՝ անալիզներ կատարելու համար։ Ե. Լալայանի կողմից արած թվագրությունների մի մասը այժմ վիճարկվում է հնագետների կողմից. այն նյութերը, որ նա վերագրում էր նեոլիթին, թվագրվում են էնեոլիթով։

Հետաքրքիր են Ե. Լալայանի մտքերը հնագիտության մասին։ Լուսժողկոմ Ա. Մռավյանին ուղղված 1927 թ. նոյեմբերի 2-ի դիմումում նա գրում է, որ

---

[41] „Известия Кавказского отделения Московского археологического общества", выпуск V, Тифлис, 1919.

[42] «Ազգագրական հանդես», գիրք 15, 1907, գիրք 19, 1910։

[43] «Հանդես ամսօրյա», 1895, № 1։

[44] «Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի», Երևան, 1928, № 3։

[45] Ե. Լալայան, Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931։

[46] „Русский антропологический журнал", 1929, № 17, вып. 3, 4.

հնագիտությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախապատմական ազգագրություն, ազգագրությունն իր բոլոր խնդիրների սկիզբը որոնում է հնագիտության մեջ[47]։

Ե. Լալայանը Թիֆլիսի հայագիտական դասընթացներում դասախոսել է ընդհանուր և հայ հնագիտություն առարկաները, իսկ Հայաստանի պետական պատմական թանգարանում երկար տարիներ ղեկավարել է հնագիտության բաժինը։ Ե. Լալայանը իր գործունեության ընթացքում մեծ ուշադրություն է դարձրել ձեռագրերի հավաքմանը և անձամբ հավաքել է բավական թվով ձեռագրեր։ Նա որոշել էր հրատարակել ձեռագրերի ընդարձակ ժողովածուներ, կազմել էր Վասպուրականի հայերեն ձեռագրերի ցուցակ, երեք ստվար հատորներից բաղկացած, բայց լույս է տեսել այդ ժողովածուի միայն առաջին պրակը[48], որը ընդգրկում է 480 ձեռագրի նկարագրություն, ձեռագրեր, որոնք կարևոր նշանակություն ունեն մեր մատենագրության, հնագրության և ազգագրության համար։ Դրանց մեծ մասը 1896 թ. Վանի կոտորածի ժամանակ թաքցված է եղել եկեղեցիների գաղտնարաններում, շատերը փչացել են։ Ե. Լալայանին հաջողվում է փրկել դրանց զգալի մասը։ Այդ աշխատությունը բարձր գնահատվեց գիտական հասարակայնության կողմից[49]։

Ե. Լալայանը զբաղվել է նաև արձանագրությունների հավաքումով, նրա գրեթե բոլոր աշխատություններում տպագրված են մեծ քանակությամբ վիմագիր արձանագրություններ։ Բացի դրանից նա ցանկացել է հրատարակել արձանագրությունների դիվան. այդ մասին է վկայում նրա հայտարարությունը «Ազգագրական հանդեսում», ուր ասվում է. «Տասն տարուց ի վեր կազմում եմ «Հայկական արձանագրութիւնների ժողովածու» զարդարված արձանագրությունների բազմաթիվ լուսանկարներով։ Ուստի խնդրում եմ ուղարկել ինձ արձանագրությունների լուսանկարներ...»[50]։

Ակադեմիկոս Ն. Մառին գրած նամակում նա բազմիցս հիշատակում է, որ հավաքում է արձանագրություններ։ «Պատրաստել եմ,—գրում է Ե. Լալայանը,—Էջմիածնի ամբողջ գավառի, Մխիթար Գոշի, Հաղարծնի և Սանահինի գրեթե բոլոր արձանագրությունների լուսանկարները 13×18 սմ մեծությամբ 100 հատ։ Արդյոք չէի՞ք բարեհաճել միանգամից կամ մաս-մաս հրատարակել»[51]։

Ե. Լալայանի կազմած հայերեն արձանագրությունների կորպուսը արժանացել է Լազարյան ճեմարանի Քանանյանի անվան մրցանակի[52]։

Հայ նյութական մշակույթը հասարակության լայն խավերին ծանոթացնելու նպատակով Ե. Լալայանը ձեռնամուխ է լինում ալբոմներ կազմելուն. նա հրատարակում է 3 ստվարածավալ ալբոմ՝ նվիրված Վայոց ձորի, Վասպուրականի և Նոր Բայազետի գավառի հուշարձաններին։ Նկարների տակ բացատրությունները տպագրված են հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով։ Ա. Ջուպանյանը բարձր է գնահատել Ե. Լալայանի հրատարակած ալբոմը և առաջարկել է ընթերցողներին ձեռք բերել այն։ Իսկ կազմողի մասին հետևյալն է

---

47 Հայաստանի պետական պատմական թանգարանի արխիվ, Լալայանի անձնական գործերի թղթապանակ։

48 Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականին, կազմեց Ե. Լալայան. պրակ 1-ին, Թիֆլիս, 1915։

49 Տե՛ս «Մշակ», 1915, № 86։

50 «Ազգագրական հանդես», գիրք 23, 1912, էջ 240։

51 «Բաներեր Հայաստանի արխիվների», Երևան, 1963, № 1, էջ 138։

52 «Մշակ», 1917, № 86։

գրել. «...Մեր տոհմային ինքնաճանաչման տեսակետով այս ձեռնարկին մեջ ես ի հայտ բերած է իր վարպետ գործչի բոլոր թանկագին հատկություններբ»[53]։ Դրվատանքի խոսքեր են ասում Ե. Լալայանի այդ ձեռնարկման մասին Կ. Պոլսի «Արևելք»[54] թերթը և մյուս ամսագրերը։

Հայագիտություններ պրոպագանդելու, նրանով զբաղվողների թիվը բազմացնելու նպատակով Ե. Լալայանը 1909 թ. «Մշակում» հանդես է գալիս «Մի առաջարկ Վենետիկի Մխիթարյան ուխտին» հոդվածով, խնդրելով նրանց հայ և օտար ուսանողների համար հայագիտական ամառային դասընթացներ բացել[55]։ Նույն թերթի № 161-ում դնահատված է նրա «Հայագիտության ամառային դասընթացների առթիվ» թղթակցությունը։ Մխիթարյանները բացեցին ամառային դասընթացներ։ Լալայանը որոշում է նման դասընթացներ բացել նաև Թիֆլիսում, որտեղ պետք է դասախոսվեին հետևյալ առարկաները՝ Կովկասի և Հայաստանի աշխարհագրություն, Կովկասի, մասնավորապես Հայաստանի, հնագիտություն, հայոց պատմություն, կրոնների պատմություն, հայ ազգագրություն և այլն։ Դասընթացները բացվում են 1917 թ. և այնտեղ դասախոսելու են հրավիրվում լավագույն ուժերը։ Ե. Լալայանը դասախոսում է Կովկասի և Հայաստանի հնագիտություն առարկաները[56]։ Դասընթացում ընդգրկվում են 70 հոգի։ Նման դասընթացներ Լալայանը կազմակերպեց նաև 1920—21 թթ.[57]։

Ե. Լալայանը զբաղվել է և թարգմանություններով։ 1881 թ. լույս տեսավ նրա առաջին թարգմանությունը՝ «Մահմեդի տոպրակ» արևելյան զրույցը, 1882 թ.՝ Ժ. Զանդի «Վարդագույն ամպը», 1886 թ.՝ Մոլիերի «Երևակայական հիվանդ» պիեսը։ Հատկապես ազգագրական և մարդաբանական գիտությունները պրոպագանդելու համար նա ձեռնամուխ է լինում նշանավոր ազգագրագետների և մարդաբանների աշխատությունների թարգմանությանը։ Ֆրանսերենից նա թարգմանում է պրոֆ. Պետրիի «Մարդաբանության պատմական զարգացումը»[58], Շ. Լետուրնոյի «Ամուսնության զարգացումը»[59], Ա. Պոզոդայի «Նորագույն տեսություններ գերդաստանի, հասարակության և պետության ծագման վերաբերյալ»[60], նույնի «Մարդաբանությունը»[61], Գ. Կանեստրիի «Մարդաբանություն» աշխատությունը[62], ռուսերենից՝ Ե. Զվյագինցևի և Ա. Բերնաշևսկու «Դարեր և մարդկանց աշխատանքը» գործը[63]։ Պետք է նկատել, որ թարգմանությունների ընտրությունը ոչ միշտ է հաջող կատարված. հայտնի ազգագրագետների՝ Լ. Մորգանի, Է. Թեյլորի, Մ. Կովալևսկու աշխատությունների փոխարեն նա թարգմանել է Շ. Լետուրնոյի ոչ այնքան արժեքավոր վերոհիշյալ գիրքը։ Ընտրության գործում հավանաբար դեր է խաղացել այն հանգամանքը, որ Շ. Լետուրնոն եղել է Ե. Լալայանի պրոֆեսորը Ժնևում։

53 «Անահիտ», Փարիզ, 1909, № 5—6, էջ 191։
54 «Արևելք», Կ. Պոլիս, 1901, № 1610։
55 «Մշակ», 1909, № 151։
56 «Մշակ», 1917, № 65։
57 «Թանկեր Հայաստանի արխիվների», Երևան, 1963, № 1։
58 «Ազգագրական հանդես», գիրք Ա, Տուլի, 1896։
59 Նույն տեղում։
60 «Ազգագրական հանդես», գիրք Գ, Թիֆլիս, 1898, գիրք Դ, Թ, 1898, գիրք Ե, 1899։
61 «Ազգագրական հանդես», գիրք Դ, Թիֆլիս, 1898, գիրք Զ, Թիֆլիս, 1900։
62 «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897։
63 Երևան, 1926։

Երկար տարիների համառ, քրտնաջան և զրկանքներով լի կյանքը քայքայեր էր Ե. Լալայանի առողջությունը, բայց նա դեռևս լի էր իր սիրած գործը շարունակելու բուռն ցանկությամբ։ Երբ սրտի ծանր հիվանդությամբ պառկած ժամանակ նրա բարեկամներից մեկը՝ Պ. Արելյանը հարցնում է, թե ինչպես է զգում իրեն, նա պատասխանում է. «Եթե առողջանամ այնքան պետք է աշխատեմ որ նորից հիվանդանամ»։ Ե. Լալայանը վախճանվեց 1931 թ. փետրվարի 24-ին։ Նրա մահը չափազանց մեծ կորուստ էր հայագիտության համար։ Միանգամայն իրավացի է պրոֆ. Խ. Սամվելյանը, երբ Ե. Լալայանի մասին գրել է. «Հիրավի, Ե. Լալայանը ծավալել է մի այնպիսի էքսպանսիվ աշխատանք, գլուխ բերել այնպիսի հսկա գործ, որի նման թե՛ արտասահմանում և թե՛ Ռուսաստանի գիտական-հետազոտական ասպարեզներում կատարել են հատուկ ընկերություններ՝ ինստիտուտներ՝ կազմակերպված հավաքական ուժերով, կոլեկտիվ ջանքերով, խմբական էքսպեդիցիաներով։ Այսօր Ե. Լալայանը մեզ թողեր է սոսկ իր անհատական ջանքով, իր միանձնյա գործունեությամբ կատարած աշխատանքի մի ահագին ժառանգություն, որը պատիվ կբերի ամեն մի գիտական կազմակերպության կամ ինստիտուտի, եթե այն կատարված լիներ վերջինիս նույնիսկ հավաքական ուժերով»[64]։

ЕРВАНД ЛАЛАЯН

(К 100-летию со дня рождения)

К. В. МЕЛИК-ПАШАЯН

(Резюме)

Крупный армянский ученый — этнограф, фольклорист, археолог, основоположник армянской этнографической науки Ерванд Александрович Лалаян (13. III. 1864—24. II. 1931) родился в Александрополе (ныне Ленинакан), в семье рабочего. Окончив в 1894 г. общественный факультет Женевского университета, Лалаян учительствовал в Шуше, а затем в Тифлисе, в Нерсисяновской семинарии. Им было осуществлено издание первого армянского этнографического журнала «Азгагракан Андес», первый выпуск которого вышел в 1896 г. в Шуше, а все последующие — в Тифлисе (всего было издано 26 книг). В 1906 г. он организовал Армянское этнографическое общество.

Основанные Лалаяном журнал и общество сыграли значительную роль в развитии армянской этнографической науки и в расширении этнографической научно-исследовательской работы в Закавказье. В 1909 г. по инициативе Лалаяна в Тифлисе организуется Этнографическо-археологический музей, который в 1921 г. перемещается в Ереван и здесь, на базе этого музея, создается государственный исторический музей Армении, первым директором которого и становится Лалаян. Лалаян — автор более шестидесяти научных трудов, среди которых наиболее видное место занимают монографии об армянах Зангезура, Джавахка, Варан-

[64] «Խորհրդային Հայաստան», 1931, № 50։

ды, Ганджинского, Шаруро-Даралагязского, Нор-Баязетского уездов, Васпуракана и других.

Большой интерес представляют раскопки Е. Лалаяна в Нор Баязетском районе, Даралагязе, Шреш-блуре, Эларе и ряде других мест Армении, где были обнаружены ценные археологические материалы, имеющие большое значение для изучения материальной культуры доармянского периода. Итоги археологических раскопок Лалаяна обобщены в его исследовании «Раскопки могильников Советской Армении».